

Արթուր Միրզոյան
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
Գրականության ինստիտուտի հետազոտող
ORCID ID : 0009-0006-1092-7899
mirzoianarthur@gmail.com
DOI: 10.54503/1829-0116-2026.1-44

ԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՏՈՒՄԸ ԲԱՖՖՈՒ ՎԻՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՀԵՐՈՍ, ԸՆԹԵՐՑՈՂ, ԱԶԳ՝

Բանալի բառեր – Բաֆֆի, բիլդունգսռոման, «Սալբի», «Ոսկի աքաղաղ», «Դավիթ Բեկ», բուրժուազիա, ազգ՝

Հոդվածում քննվում է դաստիարակչական վեպի՝ բիլդունգսռոմանի պատումային տրամաբանության ձևավորումն ու զարգացումը Բաֆֆու վիպագրության մեջ՝ «Սալբի»-ից մինչև «Ոսկի աքաղաղ» և «Դավիթ Բեկ»: Հենվելով Ֆ. Մորետիի, Մ. Բախտինի տեսությունների և բիլդունգսռոմանի արդի ուսումնասիրությունների վրա՝ հոդվածը փորձում է ցույց տալ, որ Բաֆֆու համար հերոսի կայացումը ոչ միայն անհատի հասունացման, այլև արդի հայ ընթերցողի, ազգային-բուրժուական սուբյեկտի կազմավորման ձև է: «Սալբի»-ում այս տրամաբանությունը դեռ միահյուսված է սիրավեպի և լուսավորական ապաարնելականացման տրամաբանությանը, իսկ սոցիալական վեպերում կապվում է փողի, կրթության, ժառանգության և դասակարգային վերարտադրության խնդիրների հետ: «Ոսկի աքաղաղ» վեպում կատալիզատորների, ընթերցանության և առօրյա դիմի միջոցով այն հասնում է իր լիարժեքորեն կայացած ձևին՝ վեպի մեջ կապելով հերոսի և ընթերցողի ձևավորումը: «Դավիթ Բեկ» վեպում նույն տրամաբանությունը փոխակերպվում է ազգային-պատմական ու հերոսական առաքելության պատումի՝ բացահայտելով իր քաղաքական սահմանները:

Arthur Mirzoyan
Researcher at the Institute of Literature after M. Abeghyan of NAS of RA
ORCID ID: 0009-0006-1092-7899
mirzoianarthur@gmail.com

THE NARRATIVE OF FORMATION IN RAFFI'S NOVELS: HERO, READER, NATION

Keywords: Raffi, Bildungsroman, “Salbi”, “The Golden Rooster”, “Davit Bek”, bourgeoisie, nation.

* Հոդվածն ընդունվել է տպագրության 27.05.2025 թ.:
Ուղարկվել է գրախոսության 29.05.2025 թ.:

The article examines the formation and development of the narrative logic of the Bildungsroman in Raffi's fiction, from "Salbi" to "The Golden Rooster" and "Davit Bek". Drawing on the theories of F. Moretti and M. Bakhtin, as well as on recent scholarship on the Bildungsroman, the article seeks to show that, for Raffi, the formation of the hero is not only a model of individual maturation, but also a form through which the modern Armenian reader and the national-bourgeois subject are constituted. In "Salbi", this logic is still intertwined with the romance plot and with the Enlightenment logic of de-Orientalization, whereas in the social novels it becomes connected to the problems of money, education, inheritance, and class reproduction. In "The Golden Rooster", through catalysts, reading, and the rhythm of everyday life, this logic reaches its fully developed form, linking the formation of the hero with the formation of the reader within the novel. In "Davit Bek", the same logic is transformed into a narrative of national-historical and heroic mission, revealing its political limits.

Արթուր Միրզոյան

Исследователь в Институте литературы имени М. Абебяна, НАН РА

ORCID ID: 0009-0006-1092-7899

mirzoianarthur@gmail.com

НАРРАТИВ СТАНОВЛЕНИЯ В РОМАНАХ РАФФИ: ГЕРОЙ, ЧИТАТЕЛЬ, НАЦИЯ

Ключевые слова: Раффи, роман воспитания, «Салби», «Золотой петух», «Давид-Бек», буржуазия, нация.

В статье рассматриваются формирование и развитие повествовательной логики романа воспитания в прозе Раффи — от «Салби» до «Золотого петуха» и «Давид-Бека». Опираясь на теории Ф. Моретти и М. Бахтина, а также на современные исследования романа воспитания, статья стремится показать, что для Раффи становление героя является не только моделью индивидуального взросления, но и формой конституирования современного армянского читателя и национально-буржуазного субъекта. В «Салби» эта логика еще переплетена с любовно-романсным сюжетом и просветительской логикой деориентализации, тогда как в социальных романах она связывается с проблемами денег, образования, наследования и классового воспроизводства. В романе «Золотой петух» через катализаторы, чтение и ритм повседневной жизни эта логика достигает своей наиболее завершенной формы, связывая в романе становление героя со становлением читателя. В «Давид-Беке» та же логика преобразуется в повествование о национально-исторической и героической миссии, одновременно выявляя свои политические пределы.

Ներածություն

«Աշխարհի ուղին. բիլդունգսռոմանը եվրոպական մշակույթի մեջ» աշխատության մեջ գրականագետ Ֆրանկո Մորետին դաստիարակչական վեպը՝ բիլդունգսռոմանն անվանում է «արդիականության խորհրդանշական ձևը» (Moretti, 1987: 5): Անտիկ էպիկական հերոսների հասունությանը

նա հակադրում է եվրոպական մեծ վեպերի հերոսների ընդգծված երիտասարդությունը¹, որը ծառայում է իբրև արդիականության էության խորհրդանիշ՝ նշանավորվող իր շարժունակությամբ և ներքին անբավարարվածության զգացումով, քանզի ինչպես այս վեպերի երիտասարդ ու անհանգիստ հերոսն է լքում մանկության ստատիկ աշխարհն ու հեռանում՝ կերտելու իր ապագան, այնպես էլ Եվրոպան տասնութերորդ դարի սկզբին «ընկղմվում է արդիականության մեջ»՝ առանց ձևավորած լինելու դրա մշակույթը (Moretti, 1987: 5): Մյուս կողմից, սակայն, գրականագետը պնդում է, որ ժանրի խորքային կառուցվածքը հիմնված է անհատականության և նորմալության, ինքնավարության և սոցիալականացման, ներաշխարհի և հասարակական ձևերի համադրման վրա. «Եթե փլուզումանը մեզ համար նույնիսկ այսօր ի հայտ է գալիս որպես մեր պատմության էական, առանցքային կետ, դա այն պատճառով է, որ նրան հաջողվել է ներկայացնել անհատականության և նորմալության այս միաձուլումը այնպիսի համոզիչ ուժով և լավատեսական հստակությամբ, որն այլևս երբեք չի գերազանցվի... Մարդու ձևավորումը որպես անհատ՝ ինքն իր մեջ և իր համար, առանց խզումների համընկնում է նրա սոցիալական ինտեգրման հետ՝ որպես ամբողջի մի պարզ մասնիկ» (Moretti, 1987: 16): Խորհրդային նշանավոր գրականագետ Միխայիլ Բախտինը ևս ժանրի համար տիպական է համարում գլխավոր հերոսի՝ «երիտասարդական իդեալիզմից և ֆանտազիաներից դեպի հասուն սթափություն և գործնականություն» անցումը՝ ի հակադրություն վեպի այլ՝ ավելի հին տեսակների (Bakhtin, 1994: 22): «Դաստիարակչական վեպը և նրա դերը ռեալիզմի պատմության մեջ» աշխատության մեջ նա առաջ է քաշում վեպի ժանրի մի տիպաբանություն, որի հիմքում հերոսի կառուցման սկզբունքն է. ի տարբերություն ավելի հին՝ ճամփորդական, կենսագրական և «փորձության» վեպերի՝ դաստիարակչական վեպի սկզբում հերոսը դեռևս ձևավորված չէ, և նրա ձևավորումը, կերպարանագործումն է դառնում վեպի պատումի շարժման առանցքը (Bakhtin, 1994: 22):

Եթե դաստիարակչական վեպը, Մորետիի ձևակերպմամբ, արդիականության «խորհրդանշական ձևն» է, ապա 19-րդ դարի հայ վիպագրության

¹ Մորետին այս շրջադարձի սկիզբը տեսնում է Գյոթեի «Վիլհելմ Մայսթերի աշակերտությունը» վեպի մեջ. «Այս վեպը միաժամանակ նշանավորում է թե՛ փլուզումանի (այն ձևի, որը գերիշխելու է կամ, ավելի ստույգ, հնարավոր է դարձնելու արևմտյան պատումի Ոսկե դարը) և թե՛ նոր հերոսի ծնունդը՝ Վիլհելմ Մայսթերի, որին հաջորդում են Էլիզաբեթ Բենեթը և Ժյուլիեն Մորելը, Ռաստինյակը և Ֆրեդերիկ Մորոն ու Բել-Ամին, Ուելվերլին և Դեյվիդ Քոփերֆիլդը, Ռենցո Տրամպլինոն, Եվգենի Օնեգինը, Բագարովը, Դորոթեա Բրուքը... Երիտասարդությունն այս հերոսների թե՛ անհրաժեշտ, թե՛ բավարար սահմանումն է» (Moretti, 1987: 3-4):

պատմության մեջ դրա կայացման ընթացքը պետք է դիտարկել իբրև ոչ միայն սոսկ ժանրային, այլև հայ արձակի՝ արդիականությունը պատումայնացնելու կարողության խնդիր: Արևելահայ առաջին վեպերի հերոսները՝ Խ. Աբովյանի Ադասին, Պ. Պռոշյանի Սոսը և Վարդիթերը, Մ. Նալբանդյանի Կոմս Էմմանուելը, երիտասարդ են, սակայն հակառակ Բախտինի սահմանած՝ դաստիարակչական վեպերի հերոսների՝ նրանց վեպերը պատումի մակարդակում չեն կենտրոնանում հերոսի հասունացման, կայացման, ձևավորման վրա: Ավելին՝ թեև այս վիպագիրների արձակը ամբողջությամբ գտնվում է ազգային-լուսավորական մտքի ծիրում և որոշակիորեն ներազդված է կրթության գերմանական իդեալից¹, նրանց վեպերում անհատի ձևավորման պատումը չի դառնում վեպի կառուցման ֆորմալ սկզբունք²: Այս բացակայության էտնաբեմին է, որ Բաֆֆու «Սալբի»-ն ձեռք է բերում ձևաբանական նշանակություն: Մինչ Աբովյանի, Պռոշյանի և Նալբանդյանի վեպերում լուսավորական ծրագիրը հիմնականում մնում է գաղափարական հորիզոնի մեջ, Բաֆֆու անդրանիկ վեպում այն սկսում է կազմակերպել նաև պատումի ներքին ընթացքը: «Սալբի»-ի մի շարք գլուխներ ամբողջությամբ նվիրված են երիտասարդ հերոսների դաստիարակությանը, սկզբում՝ գյուղի ավանդական բարքերի համատեքստում, ապա, Աշխարհունու և Սալվաթինի ջանքերով՝ դրանց դեմ: Այդուամենայնիվ, դաստիարակչական վեպը այստեղ դեռ չի դառնում վեպի գերիշխող ձևը, այլ գործում է սիրավեպի առավել ուժեղ կառույցի հետ միահյուսված. հերոսները ձևավորվում ու կայանում են նաև վեպի առանցքը կազմող սիրային պատումի միջով ու միջոցով, իսկ Ռուստամի՝ Սալբիի հանդեպ սիրո բնույթն անգամ կայացման ընթացքի մեջ է. արևելյան սիրավեպերին հատուկ «էշխ»-ից այն վերափոխվում է արդի ռոմանտիկ սիրո³: Վեպում հերոսների ձևավորումն ու կայացումը, ուրեմն, պետք է հասկանալ նաև իբրև պատումայնացում լուսավորական այն սխեմայի, որի մեջ արդիականությունը նույնացվում է ինքնավարության, ռացիոնալության և ժառանգված կենսաձևերի քննադա-

¹ Ինչպես դաստիարակչական վեպի ժանրը, այնպես էլ դրա հետ կապվող՝ գերմանական կրթական-դաստիարակչական իդեալները, մեծ ազդեցություն են ունեցել նաև 19-րդ դարի ռուս գրականության և մշակույթի վրա: Այս թեմայով ավելին տե՛ս (Steiner, 2019: 84–116):

² Այս տեսանկյունից ուշաբժան է Ղ. Աղայանի «Արություն և Մանվել» վեպը (1866 թ.), որը, սակայն, կարծում ենք, նախ՝ առավել հակվում է կենսագրական վեպին, ապա՝ գեղարվեստական իրացման առումով բավականին անկատար է՝ քիչ թե շատ միանշանակ եզրահանգումներ անելու համար:

³ Առավել բարդ ու ոչ միանշանակ կերպով միահյուսման այս միտումը տեսանելի է «Խաչագողի հիշատակարանը» վեպում, ուր դաստիարակչական վեպի ներքին տրամաբանությունը ներծծված է արկածային վեպի, պիկարեսկի կառույցի մեջ: Պիկարեսկի և բիլլունգոմանի կապերի մասին՝ տե՛ս (Amrine, 2020), (Garrido Ardila, 2015):

տական հաղթահարման հետ: Այս իմաստով «Սալբի»-ում հերոսների դաստիարակության խնդիրը կապված է հայության՝ որպես պատմական սուբյեկտի հասունացման պահանջի հետ:

«Մանկությունից դեպի հասունություն, ֆանտազիաներից դեպի սթափություն» անցման, դրա պարտքի ու անհրաժեշտության խոսույթը ինքնին գալիս է Լուսավորականությունից, որի շրջանում և որի հարացույցի մեջ էլ ծնունդ է առել Ժանրը, ուստի և այն ուղղակիորեն առնչվում է բիլդունգի (*Bildung*) վերաբերյալ 18-րդ դարի քննարկումներին¹: Դեռևս Իմանուել Կանտի՝ լուսավորության հայտնի սահմանումը՝ որպես «մարդու դուրս գալն իր՝ իրեն իսկ պարտադրված անհասունությունից» (Kant, 1991: 54), որը գրականագետ Սրինիվաս Արավամուդանը բնութագրել է իբրև «բիլդունգառոմանի մանրակերտ» (Aravamudan, 2012: 1), հենվում է կենսաբանական և կենսագրական հասունացման այլաբանության վրա, որը հետագայում եվրոպական լուսավորական և հետլուսավորական միտքն օգտագործում է՝ նկարագրելու քաղաքակրթության աստիճանական զարգացումը՝ արևելքից դեպի արևմուտք²: 19-րդ դարի հայ լուսավորականության ծրագիրը, ուրեմն, եվրոպական մտավորական ավանդույթից ժառանգում և առավել արմատական կերպով յուրացնում է³ մի նպատակաբանություն (տեղեղոգիա), որի ներսում կյանքի «ասիական» ձևերից անցումը դեպի եվրոպականը անպայմանորեն մաս է կազմում մարդկության հասունացման ընթացքի՝ սնահավատությունից, բարբարոսությունից ու բռնակալությունից դեպի ռացիոնալ, քաղաքակիրթ ու ազատ հասարակություն: Հայության հավաքական կյանքի արդիականացումը այս հայացքի ներքո պատկե-

¹ Թեև *Bildung* գոյականը երբեմն օգտագործվում է որպես «կրթություն» (*Erziehung*) կամ «զարգացում» (*Entwicklung*) բառերի հոմանիշ, որտեղից էլ գալիս են ռուսերեն «воспитательный роман» և հայերեն «դաստիարակչական վեպ» ձևակերպումները, այն ունի այլ իմաստային շերտեր. բիլդունգը ներքին ձևավորման շարունակական գործընթաց է, որը անպայմանորեն նպատակ չունի հասնել գործնական նվաճումների, ինչպիսիք են քաղաքավարությունը, գիտելիքների հարստությունը կամ որոշակի օգտակար հմտությունների վարժեցումը: Նույնպես և բիլդունգառոմանի նյութը ոչ այնքան կրթությունն է ֆորմալ իմաստով (թեև կրթություն ստանալու նպատակով հայրենի գավառից հեռանալը և ընթերցանությամբ վերափոխվելը հաճախ հանդիպող մոտիվներ են ու կարևոր դեր են կատարում այս տեսակի վեպերում), որքան անհատի խորքային կայացումը՝ անցումը ոչ հասունությունից դեպի հասունություն, կախվածությունից դեպի ինքնավարություն, և կյանքի ժառանգված ձևերից դեպի առավել գիտակից առնչություն ինքնության և հասարակության հետ:

² Սրա, թերևս, ամենահայտնի օրինակը Գ. Ֆ. Վ. Հեգելի «Պատմության փիլիսոփայության» մեջ է, որտեղ նա Արևելքը համարում է «Պատմության մանկությունը» (Hegel, 2001: 203):

³ Հայ լուսավորական մտքի «հակաասիականության» վերաբերյալ տե՛ս Ա. Գրիգորյանի դիտարկումները արևելահայ արմատական լուսավորականների քաղաքական ծրագրերի վերաբերյալ (Գրիգորյան, 2023: 14–15):

րացվում է իբրև ձևավորման, հասունացման գործընթաց, ուստի դաստիարակչական վեպը դառնում է այն գրականության մեջ պատկերելու և մտածելու հատկապես ուժական պատումային ձև: Միաժամանակ՝ «Մալբի» վեպում հերոսների հասունացումն ու կայացումը անբաժանելի է նրանց բարքերի արևմտականացումից: Հասունությամբ, ռացիոնալությամբ, ինքնավարությամբ ու ռեֆլեքսիվությամբ բնորոշվող արդի սուբյեկտն ընկալվում է իբրև ինքնին արևմտյան, ուստի և դաստիարակչական վեպը այս համակարգում անպայմանորեն նաև «ապաարևելականացման վեպ» է:

«Մալբի» վեպում, ինչպես նշեցինք, դեռևս գործ ունենք հիբրիդային ձևերի հետ. բիլդունգսռոմանի տարրերը միևնույն վեպի միաձույլ կերպով ներկա են այլ առավել գերիշխող ժանրաձևերի հետ: Իմաստալից սոցիալական շարժականությունը գրեթե ամբողջությամբ բացակայում է, չի կարող լինել եվրոպական դաստիարակչական վեպին բնորոշ քաղաքային իրականությունը: 1850-60-ականներին Բաֆֆու վիպագրության մեջ դաստիարակչական վեպի տարրերն առաջին անգամ ի հայտ են գալիս՝ ուղղակիորեն ծագելով նրա լուսավորական աշխարհայացքի տրամաբանությունից: 1870-ականներին հայտնվելով բուրժուականացող Թիֆլիսում՝ Բաֆֆին այդ տրամաբանությունը պիտի փորձարկի իր սոցիալական վեպերում՝ վաճառականության կյանքի հողի վրա: Հերոսի ձևավորման հարցը այնտեղ արդեն ուղղակիորեն կապվելու է փողի, ժառանգության, դասակարգի վերարտադրության և ֆորմալ կրթության հետ: Սոցիալական այս դաշտի մեջ է միայն, որ պիտի կայանա Բաֆֆու վիպագրության մեջ ժանրի միակ լիարժեք իրացումը՝ «Ոսկի աքաղաղ»:

Վաճառականությունը և բուրժուական սուբյեկտի հնարավորությունը

«Երբ 1870-ականների սկզբին Բաֆֆին հայտնվեց Թիֆլիսում», - գրում է ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը. «արևելահայերի հասարակական կյանքում կատարվել էին շատ էական տեղաշարժեր: Փոխվել էր բուրժուականացող հասարակության սոցիալական դիմագիծը, տրոհելով ազգային ընդհանրության լուսավորական պատկերացումները:Գաղափարական այսպիսի անցում բնորոշ եղավ Բաֆֆու աշխարհայացքին, հանգամանք, որ փոխակերպեց իրականության գեղարվեստական ընկալման նրա մտակառուցումները: Ազգային վիպասանության ժամանակային-տարածական բաց սյուժեները տեղի տվեցին անհատի սոցիալական կենսագրությունը ներկայացնող փակ սյուժեներին» (Սարինյան, 2005: 221): Այս համատեքստում է, որ Բաֆֆին գրում է հայ վաճառականության կյանքը պատկերող իր երեք վեպերը՝ «Ջահրումար», «Մինն այսպես, մյուսն այնպես» և «Ոսկի աքաղաղ», որոնք բաֆֆիագիտության մեջ ընդունված է համարել սոցիա-

լական վեպերի յուրատեսակ եռագրություն, «ուր առկա է ոչ միայն սոցիալական ժամանակի պատմական ընթացքը, այլև պոետիկական համակարգի մի որոշ ընդհանրություն» (Սարինյան, 2005: 221): Իսկապես, մի կողմից այս եռագրությունը կարծես կառուցվում է վաճառականական տիպերի հաջորդական բացահայտմամբ. «Ճանճուր Իվանիչ - Ադա Պարոնով - Պետրոս Մասիսյան, այսպես է ուրվագծվում հայ վաճառականության սոցիալական կենսագրությունը «Զահրումար», «Մինը այսպես, մյուսը այնպես», «Ոսկի աքաղաղ» վեպերում, նույն զուգահեռի վրա դնելով գաղափարական հերոսներին՝ Վահե Արամյան - Ռուբեն Արուսյան - Միքայել» (Սարինյան, 2005: 222): Մյուս կողմից, սակայն, Բախտինի առաջարկած՝ հերոսի կառուցման սկզբունքի տեսանկյունից՝ սրանք միմյանցից ընդգծված կերպով տարբեր վեպեր են: Եթե առաջին երկուսի պատումները կառուցված են հիմնականում արդեն ձևավորված տիպերի բախման վրա, ապա երրորդը խնդիրը բացում է դաստիարակչական վեպի կառույցի միջոցով:

Այս տարբերությունը հասկանալու համար, կարծում ենք, հարկ է անդրադառնալ Բաֆֆու՝ հայ վաճառականության խնդիրներին նվիրված հրապարակախոսական հոդվածներում առաջ քաշված դրույթներին: «Մեր հայերի մեջ, ինչպես այժմ մենք նկատում ենք, կան մի քանի դասակարգի պատկանող անձինքներ, որոնք կենտրոնացնում են իրանց մեջ մեր ազգի ներկա և ապագա ուժը. սոցանից առաջինն է վաճառական, երկրորդ՝ արվեստավոր և երրորդ՝ մշակ, այն է՝ հողագործ դասը», - գրում է Բաֆֆին «Հայ վաճառականներ Կովկասի մեջ» հոդվածում (Բաֆֆի, 1964: 216): Բայց քանի որ վերջին երկուսը, ըստ նրա, դեռևս գտնվում են «խավար, տգետ ողորմելի դրության մեջ», ազգային կյանքի հույսը դրվում է վաճառականության վրա. «Մեր հույսը մնում է միայն ազգի առավել բարձր, առավել զարգացած, այն է վաճառականական դասի վրա. նոքա պիտի լինեն մեր հայտնի ներկայացուցիչքը քաղաքական ազգերի առաջ, նոքա պիտի վերականգնեն մեր ընկած նշանակությունը մյուս ազգերի մոտ, և միննույն ժամանակ նոքա պիտի լինեն մտրակող ուժը մեր մյուս, այն է արվեստավոր և մշակ դասակարգի» (Բաֆֆի, 1964: 216): Սակայն այս հնարավոր ազգային առաքելության տեսլականը բախվում է իրական հայ վաճառականության անպատրաստ և բարոյապես խեղված վիճակին. հայերը, չհետևելով «լուսավորյալ ազգերի առաջխաղացության» օրինակին, մնացին «միևնույն հին վաճառականները», որոնց օրենքը «կայանում է միմիայն հազարավոր անուղիղ ճանապարհներով փող ձեռք բերելու, օգուտ քաղելու իրենց ստորադրյալների տգիտությունից» (Բաֆֆի, 1964: 218): «Վաճառականությունը հայերի մեջ» հոդվածում Բաֆֆին քննում է հայ վաճառականության՝ վաղ արդի շրջանում ունեցած իր դիրքից անկման պատճառները. հայերը ժա-

մանակին խաղում էին «առաջին դերը» ասիական վաճառականության մեջ, բայց եվրոպացի վաճառականների հայտնվելով հայ վաճառականությունն սկսում է պարտվել ավելի ուժեղ մրցակցին: Պարտության պատճառը միայն կապիտալի պակասը չէր: Բաֆֆին նախ շեշտում է առևտրական կապերի միջնորդավորված և ուշացած բնույթը. «Մինչդեռ հայը առնում էր յուր ապրանքները երկրորդական և երրորդական ձեռքերից, հետզհետե թանկ նստեցնելով յուր վերա վաճառքի գները, եվրոպացին բերել էր տալիս նույնը ուղղակի նորա աղբյուրից, այսինքն նորա կենտրոնից, ավելի էժան գնով» (Բաֆֆի, 1964: 35): Դրան ավելանում էր լեզուների և ուղիղ կապերի բացակայությունը. «Հայերը չգիտեին եվրոպական լեզուներ, և ծանոթ չէին Եվրոպայում երևելի վաճառական տների և գործարանների հետ»: Նույնքան կարևոր էր ընկերակցական և հաշվապահական մշակույթի բացակայությունը: Հայերի ընկերությունները ձախողման պատճառն էլ «նոցա գիտնական վաճառականության արհեստը չիմանալը և հաշվապահության կանոններին անտեղյակ լինելն» էր: Այսպիսով, Բաֆֆու համար հայ վաճառականության ճգնաժամը բարոյական, տեխնիկական և կրթական ճգնաժամ է միաժամանակ: «Վաճառականությունը ինքնըստինքյան մի արհեստ է: Նորան պետք է գիտնական կերպով ուսումնասիրել և փորձով իրագործել» (Բաֆֆի, 1964: 37): Անհրաժեշտ է, որ կենդանի կապիտալի, ուղղակի առևտրական կապերի և տեղական հումքի արդյունաբերական մշակման վրա հիմնված նոր վաճառականություն ձևավորվի:

Այստեղ էական է բուրժուազիայի կապը բիլդունգստոմանի հետ: Գրականագետ Աննե Ռյուգեմայերը նկատում է, որ բիլդունգստոմանի ժանրը իր ձևավորման շրջանում մտավոր առումով ազատագրված, բայց տնտեսապես անգոր գերմանական բուրժուազիայի ինքնաարտահայտման ձևն էր: Ժանրի կենտրոնացումը ինքնազարգացման վրա այս շրջանում, հետևապես, մեկնաբանելի է իբրև յուրօրինակ փոխհատուցում՝ միջին դասի սահմանափակ հանրային իշխանության դիմաց (Rüggemeier, 2023): Դասական բիլդունգստոմանի վերաբերյալ ուսումնասիրություններում, առհասարակ, այս ժանրը բուրժուական է համարվում առնվազն երեք փոխկապակցված իմաստներով. այն ի հայտ է գալիս ընթերցանության բուրժուական մշակույթի ներսում, կոդավորում է կայացման ու ինքնաձևավորման բուրժուական նորմերը և ներկայացնում է այդ նորմերը որպես հասունության արտոնյալ ձև (Swales, 1978: 27): Բուրժուազիայի պատմական վերելքին և ընթերցող հանրության՝ քաղաքային միջին խավերից անդին պատմական ընդլայնմանը զուգընթաց, ուրեմն, ժանրը մի կարևոր մասն է դառնում եվրոպական հասարակության բուրժուականացման:

Հարցին, թե կարո՞ղ է արդյոք հայ վաճառականական հարստությունը, անցնելով կրթության և գրագիտության միջով, դառնալ ոչ թե մասնավոր կուտակման, այլ ազգային-պատմական ձևավորման ուժ, «Զահրումար» վեպում¹ տրվում է բացասական պատասխան: Վեպի սկիզբը, առաջին հայացքից, տալիս է բուրժուական վերելքի պատումի անհրաժեշտ նյութը. «Կովկասյան նահանգի մի գավառաքաղաքի մեջ բնակվում էր Հացի-Գելենց Օհաննեսի որդի Ղադո անունով վաճառականը: Նրա ծնողքը, մեռնելով խոլերայից, թողեցին միակ զավակը, փոքրիկ Ղադոյին մանկական հասակում բոլորովին անխնամ և հետին աղքատության մեջ: Փոքրիկ Ղադոն օրական հացի կարոտ չմնալու համար, իրանց թաղի ծխատեր քահանա տեր-Մարութի բարերարությամբ, հանձնվեց իբրև աշակերտ մրգավաճառ Պաճո-Սոսիկոյի մոտ, ուր նրա պաշտոնն այն էր՝ հսկել խանութի դռանը, կանաչների վրա ջուր սրսկել, խնձորների փոշին սրբել, վաճառողներ հրավիրել և երբեմն մի անցնող ջիուղի հետևից թաքուն քարշ տալ աղվեսի պոչ, հետո, հայ, հոյ աղաղակ բարձրացնել, ծափ տալ և յուր վարպետին ծիծաղեցնել» (Բաֆֆի, 1984: 7): Ճանճուր Բվանիչի կյանքի այս ամփոփ պատմության մեջ առկա են բուրժուական վերելքի պատումի արտաքին պայմանները՝ որբություն, աղքատություն, աշակերտություն, խանութ, աշխատանքային միջավայր, աստիճանական սոցիալական բարձրացման հնարավորություն: Բայց Բաֆֆին այդ նյութը չի վերածում դաստիարակչական վեպի. Ղադոյի ձևավորման պատմությունը տրվում է ամփոփ, նախապես ավարտված և արդեն խեղված վիճակում: Վեպի մնացած ողջ ընթացքում նա ստատիկ կերպար է: Ճանճուրի կենսագրությունն ընթեռնելի է, ուրեմն, իբրև բիլդունգստոմանի խեղված նախապատկեր²: Արևմտականացման

¹ Հայտնի է, որ հոր՝ Միրզա-բեկի մահից հետո ժառանգելով Մելիք-Հակոբյանների առևտրական տունը՝ նա, ի վերջո, չի կարողանում հաջողության բերել գործը, և 1867-68 թթ. ընթացքում այն սնանկ է հայտարարվում: Ինչպես հիշում է գրողի կենսագիր Ավագ Ավթանդիլյանցը. «Մելիք Միրզայի տան և Բաֆֆիի կատաղի հակառակորդները այնքան աշխատեցին, որ զանազան անարդար միջոցներով այդ տունը քար ու քանդ արին: Վաճառական Բաֆֆին սնանկ հրատարակվեց» (Ալթանդիլյանց, 1904: 81): Պարտատերերից հալածված գրողը Թիֆլիսում «դուքանչու աշակերտի» պաշտոնով ծառայության է անցնում վաճառական Նասիբովների խանութում, իսկ 1870-71 թթ. նույնաման պայմաններով աշխատում նաև Հախնազարովների խանութում (Բաֆֆի, 1984: 7): Հենց այս շրջանի իր փորձառությունների տպավորության ներքո է Բաֆֆին գրել «Զահրումար» վեպը:

² «Մինն այսպես, մյուսն այնպես» վեպում Բաֆֆին մի կողմից որոշակիորեն զարգացնում է թիֆլիսեցի վաճառականի մոդելը՝ Ադա Պարոնովի կերպարով, մյուս կողմից՝ նրա դիմաց դնում Ռուբեն Արուսյանին՝ որպես նոր վաճառականի հնարավոր կերպար: Ռուբենը ներկայացնում է «գիտնական վաճառականության» գաղափարը, բայց ոչ նրա ձևավորման պատմությունը: Նա պատումի մեջ հայտնվում է արդեն կայացած՝ իբրև Ադա Պարոնովի դրական հակադրիկ:

արտաքին նշանները չեն հաղթահարում «ասիական» վաճառականության ներքին տրամաբանությունը, այլ հաճախ դառնում են դրա նոր դիմակը: Այլ կերպ ասած՝ «Զահրումար»-ը սկսվում է այն կետից, որտեղ բիլդունգառմանն արդեն ձախողվել է:

«Ոսկի աքաղաղ» վեպը ևս սկսվում է գյուղացի փոքրիկ տղայի՝ Կալոյի մանկությունից, սակայն ի տարբերություն Ղադոյի՝ նրա հասունացման և «վերելքի» պատմությունը ոչ թե սեղմորեն ներկայացվում է վեպի սկզբում, այլ դառնում է դրա ամբողջ բովանդակությունը: Փոքրիկ երեխայի մեջ քաղաք գնալու ցանկությունը արթնանում է հանկարծակի՝ մանկական հետաքրքրասիրությունից դրդված, իսկ նրա մայր Շուշանը ցանկանում է, որ երեխան դուրս գա գյուղական սահմանափակ միջավայրից. «թող աշխարհ տեսնի... բան կսովորի, աչքը կբացվի» (Բաֆֆի, 1984: 217): Այս նախադասությունը Կալոյի ճանապարհը ներկայացնում է որպես փորձառության և աշխարհաճանաչման ուղի: Բայց հերոսի մուտքը քաղաք անմիջապես նրան դնում է երկու հակադիր արժեհամակարգերի միջև: Մի կողմից՝ կա այն բիլդունգը, որի հնարավորությունը բացում են աշխարհ տեսնելը, գրագիտությունը, ընթերցանությունը և հետագայում Մոսկվայում առևտրական կրթությունը: Մյուս կողմից՝ կա Մասիսյանի վաճառականական «դաստիարակությունը», որի նպատակն է երեխային դարձնել հին կապիտալի սպասավոր: Վեպի առաջին մասի ներքին դինամիկան հենվում է հենց այս լարման վրա. Կալոն պիտի անցնի Մասիսյանի տան միջով, բայց չձևախեղվի նրա ազդեցության ներքո: Հաջողությամբ հաղթահարելով այս փորձությունը և Ստեփանի օգնությամբ տառաճանաչ դառնալով՝ հերոսը հնարավորություն է ստանում տեղափոխվել Մոսկվա, ուր և նրա բիլդունգը ամբողջանում է:

«Վաճառականությունը հայերի մեջ» հոդվածում Բաֆֆին տալիս է դաստիարակչական պատումային մոդելի՝ հին վաճառականական միջավայրում ձևավորման անհնարինության հիմնավորումը. «մի հաստափոր ճանճուր Իվանիչի» խանութը «չէ կարող վարժարան լինել» (Բաֆֆի, 1964: 37): Սակայն «Ոսկի աքաղաղ» վեպում ներկայացված սոցիալական իրականության՝ «Զահրումարի» և «Մինն այսպես, մյուսն այնպես»-ի միջավայրից սկզբունքային տարբերությունները որոշիչ դեր են խաղում այդ վեպերի ժանրային ընգծված տարբերությունների մեջ: Կարևոր է, նախ, Մասիսյանի մարմնավորած վաճառականի տիպը: Հեղինակ-պատմողն ուղղակիորեն նշում է, որ Պետրոս Մասիսյանը ճանճուր Իվանիչի կամ Ադա Պարոնովի նման «նովբիսա» չէ. «Նա իր հարստությամբ ո՛չ պարծենում էր և ո՛չ հպարտանում, այլ ընդհակառակն, նա խիստ համեստ մարդ էր և աշխատում էր, որքան կարելի էր, սակավ ցույց տալ ժողովրդի աչքին այն, որքան ինքն

ուներ» (Բաֆֆի, 1984: 228-229): Նա հին խոջայական դասի ժառանգն է՝ գծում, հաշվենկատ, գիտեցող «կապիտալի գործածության բոլոր խաբեական ձևերը», հնի պաշտամունքով ապրող, նորի թշնամի: Մասիայանը՝ ի տարբերություն Հացի-Գելենցի, հմուտ ու հաջողակ է իր գործում, նրա հարստությունը՝ իրական, բայց անտեսանելի: Մասիայանի կերպավորման մեջ Բաֆֆին գերծ է մնում նախորդ վեպերի սատիրական գրոտեսկից. հին առևտրական աշխարհը նրա մեջ հանդես է գալիս ոչ թե դիմակով, այլ իր բնական, կարծրացած ամբողջականությամբ:

Արևելյան տոհմիկ վաճառականության այս մարմնավորումը, իհարկե, հնարավոր չէր գտնել Կովկասի փոխարքայության մայրաքաղաք Թիֆլիսում, ուստի վերջինի առևտրական միջավայրում բիլդունգառմանի պատումի անհնարինությունը նախորդ երկու վեպերում բացահայտելուց հետո Բաֆֆին, կարծես, հայացքն ուղղում է ետ՝ դեպի գավառական Երևան, որտեղ, նախ, պարսկական տիրապետությունից ժառանգված «ասիական» բարքերը դեռ ավելի փակ ու անմիջական են, ուստի դեռ «Սալբի»-ից եկող «ապաարենլականացման» րաֆֆիական մոդելը կարող է լիարժեք արտահայտություն ստանալ, ապա՝ այն գտնվում է բուն Հայաստանում, ուստի Մասիայանի տան փրկության և ժառանգության վերափոխման հնարավորությունը վեպում ստանում է ազգային չափում:

Մ. Բախտինը համարում է, որ իրական դաստիարակչական վեպը ներկայացնում է «ազգային-պատմական ժամանակի մեջ աճող մարդու պատկերը» (Bakhtin, 1986: 25): Բախտինի համար անհատական փորձառությունն ու սոցիալ-քաղաքական զարգացումը միաձուլող պատումը պահանջում է ազգային ֆորմա. «Այս գերիշխող, զանգվածային տեսակի [«պատրաստի» հերոսով վեպի] կողքին կա վեպի մեկ այլ՝ անհամեմատ ավելի հազվադեպ տեսակ, որը տալիս է կայացման գործընթացում գտնվող մարդու պատկերը: Հերոսն ինքը՝ նրա կերպարը, դառնում է փոփոխական մեծություն վեպի այս տեսակի բանաձևում: Հենց հերոսի մեջ տեղի ունեցող փոփոխությունները ձեռք են բերում այուժետային նշանակություն... Ժամանակը ներմուծվում է մարդու մեջ, մտնում նրա բուն կերպարի մեջ՝ արմատապես փոխելով նրա ճակատագրի և կյանքի բոլոր կողմերի նշանակությունը: Վեպի այս տեսակը ամենաընդհանուր իմաստով կարող է բնորոշվել որպես մարդու կայացման վեպ... Ամեն ինչ կախված է իրական պատմական ժամանակի յուրացման աստիճանից»: (Bakhtin, 1986: 21) ««Ազգային-պատմական ժամանակը» թույլ է տալիս գյոթեական բիլդունգառմանին հաշտեցնել կապիտալիստական արդիականության անսահման ժամանակը և ավանդույթի սահմանափակ կամ ցիկլային ժամանակը», - նկատում է գրականագետ Ջեդ Էսթին. «Այդ իմաստով՝ Բախտինի համար միայն ազ-

գային ժամանակն է իրական. այստեղից էլ՝ նրա շեշտադրումը «տեղանքի կոնկրետ ընկալման» վրա, որն ընկած է Գյոթեի խորը պատմական տեսականի հիմքում» (Bakhtin, 1986: 34): Ջ. Էսթիի ձևակերպմամբ՝ ազգը «ավարտուն ձև է տալիս արդի հասարակություններին այնպես, ինչպես չափահասությունն է ավարտուն ձև տալիս արդի սուբյեկտին» (Esty, 2012: 4): Այսպիսով, բիլդունգոռոմանի մեջ բուրժուական ինքնակարգավորումը և ազգային-պատմական ձևավորումը նույն պատումային խնդրի երկու կողմերն են. անհատի հասունացումը պատմական իմաստ է ստանում այն դեպքում, երբ այն ընթեռնելի է դառնում իբրև հասարակության հնարավոր հասունացման մոդել:

Գերմանական բիլդունգոռոմանի պատմությանն անդրադառնալով՝ Թոդդ Քոնթեն ժանրը քաղաքական է համարում այն պատճառով, որ այն բացահայտում է մշակութային ազգի (Kulturnation) և քաղաքական պետության միջև հարաբերությունները՝ միացյալ ազգային պետության բացակայության պայմաններում (Kontje, 2019: 18): Տասնիններորդ դարի հայ գրականությունը նույնպես գործում է մի տարածությունում, որտեղ մշակութային-ազգային գիտակցությունը զարգանում է առանց իր ինքնիշխան քաղաքական մարմնավորման: Հետևաբար, զարգացման սյուժեն դառնում է այնպիսի սուբյեկտների ձևավորումը պատկերացնելու միջոց, որոնք համարժեք կլինեն ինստիտուցիոնալ առումով դեռևս գոյություն չունեցող ազգային ապագային: Միաժամանակ, ի տարբերություն գերմանական օրինակի՝ այդ ձևավորումը չի կարող կատարվել միայն տեղական միջավայրում, քանի որ Արևելյան Հայաստանն այս շրջանում գտնվում է Ռուսական կայսրության տիրապետության տակ: Դասակարգելով դաստիարակչական վեպի տեսակները՝ Մ. Բախտինը առանձնահատուկ է համարում մարդու կայացման վեպը, որում անհատի ձևավորումը համընկնում է աշխարհի՝ պատմականորեն նոր ձևով գոյանալու, կերպավորվելու հետ: Այս տեսանկյունից, կարծում ենք, «Ոսկի աքաղաղը»՝ իբրև դաստիարակչական վեպ, խիստ յուրահատուկ է: Միքայելը դիմադրում է Մասիայանի՝ իրեն «մարդ դարձնելու» ջանքերին և հիմտանալով վաճառականության գործում՝ չի կորցնում իր ազնվությունն ու, ի վերջո, դառնում է վեպի ստեղծման շրջանում՝ 1870-ականներին դեռևս լիարժեքորեն չկայացած՝ նոր բուրժուազիայի ներկայացուցչի կատարելատիպ: Մյուս կողմից, սակայն, այդ նոր ֆորմացիան ինքնին տեղի է ունենում հերոսի բարքերի արևմտականացման ճանապարհով, և նա անգամ ուղղակիորեն Երևանից գնում է Մոսկվա, ուր և հնարավորություն է ստանում յուրացնելու եվրոպական «գիտնական վաճառականության» արվեստը:

Դասական բիլդունգառումանի սյուժեն տիպականորեն կառուցված է գավառից դեպի քաղաք, դեպի նոր ու մեծ աշխարհ գնացող հերոսի ինքնակայացման փնտրտուքի շուրջ¹: «Մեծ քաղաքը, - գրում է Ֆ. Մորետին,- իսկապես մեկ այլ աշխարհ է՝ մնացյալ երկրի հետ համեմատած,- բայց պատումն այն մեկընդմիջտ կկապի գավառներին՝ կառուցելով այն իբրև բոլոր տաղանդավոր երիտասարդների բնական նպատակ» (Moretti, 1999: 64): Միքայելի ճանապարհը գյուղից Երևան և Երևանից Մոսկվա հենց այս սխեմայի մի տարբերակն է: «Ոսկի աքաղաղը», ուրեմն, կայացման վեպի մի ինքնօրինակ դրսևորում է, որտեղ պատումը մի կողմից՝ հայ գյուղը կապում է Երևանին, մյուս կողմից՝ ծայրագավառ Երևանը (և Արևելյան Հայաստանը առհասարակ)՝ ցարական պետության կենտրոնին՝ բիլդունգի, կրթության և լուսավորության տրամաբանությամբ: Հակառակ դասական մոդելի, սակայն, հերոսի ուղու ավարտը Բաֆֆու դեպքում կենտրոնում հաստատվելը չէ, այլ վերադարձը Երևան, որով էլ այն գավառից կարծես վերածվում է վիպական պատումի կենտրոնի:

Ընթերցողի կայացումը

«Ոսկի աքաղաղ» վեպի առաջին մասի յոթերորդ գլխում Կալոն աստիճանաբար ընտելանում է իր նոր միջավայրին, վերանվանվում է Միքայել, փոխում հագուստը, փափախի փոխարեն կեպի դնում, ձախողում է մանր կենցաղային գործերում, կոտրում է առարկաներ, թափում թեյը, պատժվում: Մարիամը նրան պաշտպանում է, Գայանեն երբեմն բարությամբ է վերաբերվում, Հռիփսիմեն արհամարհում է, իսկ Ստեփանը սիրում է եղբոր պես և Միքայելի համար գնում մի ընթերցարան և «պարապ ժամերում դաս էր տալիս», իսկ Մասիայանը, նկատելով դա, վերցնում է գիրքը և ասում որդուն. «Ուզում ես դրան էլ փչացնես քեզ նման...»: Գլուխը շարունակվում է Միքայելի՝ շուկայում գյուղացի ընկերոջը՝ Թունիին հանդիպելու երկար տեսարանով. նա կարոտով հարցնում է գյուղի կյանքից, կիսում է իր պահած հացը, պատմում քաղաքային կյանքի դժվարությունների մասին և ընկերոջը փոխանցում իր թաղած վեգերը՝ խնդրելով բաժանել նաև այն տղային, որի հետ գժտվել էր: Գլուխն ավարտվում է նրանով, որ Միքայելը ուշացած վազում է դեպի աղայի տունը (Բաֆֆի, 1984: 234-238):

Այս հաջորդականությունը առաջին հայացքից կազմված է մանր, միջանկյալ, անգամ երկրորդական նյութից: Տեղի ունեցողը Կալոյի փոխակերպումն է Միքայելի, որը այստեղ, սակայն, ներկայացվում է առանց ինչ-որ

¹ Ջերոմ Բաքլիի «Երիտասարդության եղանակները» աշխատության մեջ այս շարժումը առանցքային է Դիքենսից մինչև Գոլդինգ անգլիական գրականության զարգացման վեպի նրա տաքսոնոմիայի համար (Buckley, 1974):

կոնկրետ տեսանելի պոստմոդերնիստական շրջադարձի: Այս գլուխը, կարծես, մեկն է վեպի բազմաթիվ հերթական «միջանկյալ» գլուխներից, սակայն դրանով իսկ կարևոր է «Ոսկի աքաղաղի» պատումի կառույցը հասկանալու համար:

Իր «Պատումների կառուցվածքային վերլուծության ներածություն» աշխատության մեջ Ռոլան Բարտը տարբերակում է պատումային ֆունկցիաների երկու հիմնական տեսակներ՝ կարդինալ ֆունկցիաներ և կատալիզատորներ. «Որպեսզի ֆունկցիան լինի կարդինալ, բավական է, որ այն գործողությունը, որին այն վերաբերում է, բացի... պատմության զարգացման համար հետևանքներ ունեցող այլընտրանք... Երկու կարդինալ ֆունկցիաների միջև միշտ հնարավոր է տեղադրել օժանդակ նշումներ, որոնք խմբավորվում են այս կամ այն միջուկի շուրջ՝ առանց փոփոխելու դրա այլընտրանքային բնույթը... Այս կատալիզատորները դեռևս ֆունկցիոնալ են... սակայն դրանց ֆունկցիոնալությունը թույլ է, միակողմանի, մակաբուծային» (Barthes, 1983: 265–266): Հենվելով Բարտի առաջարկած այս տարբերակման վրա՝ Ֆ. Մորետին իր «Բուրժուան» աշխատության «Լուրջ դար» գլխում նկատում է, որ 19-րդ դարի վեպի մեջ կատալիզատորները կամ ինչպես ինքն է դրանք անվանում՝ լցակները (filler), ստիպում են, որ «փոքր բաները դառնան նշանակալի՝ առանց դադարելու «փոքր» լինելուց, դրանք դառնում են պատում՝ առանց դադարելու լինել առօրյա» (Moretti, 2013: 82): «Ոսկի աքաղաղ» վեպում դրանք քանակական առումով կազմում են տեսարանների մեծամասնությունը. մենք տեսնում ենք, օրինակ, Մասիայանի առօրյայի նկարագրություններ՝ արևածագից առաջ արթնանալը, շուկա գնալը, խանութը բացելը, կողպեքները ստուգելը, Միքայելի աշխատանքային օրը Մոսկվայում, շուկայում հայ վաճառականների խոսակցությունները, և այսպես շարունակ: Կատալիզատորները դանդաղեցնում են պատումի ընթացքը և ռացիոնալացնում վիպական աշխարհը՝ «այն վերածելով քիչ անակնկալների, էլ ավելի քիչ արկածների, և առանց հրաշքների աշխարհի: Դրանք բուրժուական մեծ գյուտ են ոչ թե այն պատճառով, որ վեպ են ներմուծում առևտուրը, արդյունաբերությունը կամ բուրժուական այլ «իրականություններ» (ինչը նրանք չեն անում), այլ այն պատճառով, որ դրանց միջոցով ռացիոնալացման տրամաբանությունը ներթափանցում է վեպի բուն ռիթմի մեջ» (Moretti, 2013: 82): Վերադառնալով վերը ներկայացված յոթերորդ գլխին՝ կարող ենք նկատել, որ դրանում արդեն ծագում են վեպի հետագա մի շարք կարևոր զարգացումների հնարավորությունները. Հռիփսիմեի նախնական արհամարհանքը կարող է փոխվել համակրանքի, իսկ հետո անգամ սիրո, որը վեպի վերջում կավարտվի ամուսնությամբ, Մարիամի և Գայանեի հոգատար վերաբերմունքը գուցե Միքայելի մեջ պարտքի և երախտագիտության զգացումներ սերմանի, իսկ Ստեփանի նվիրած ըն-

թերցարանը կարող է Միքայելի մեջ արթնացնել կրթության և գրքերի հանդեպ սեր, որը նրան մի օր կօգնի դուրս գալ Մասիսյանի անմիջական հսկողությունից և գնալ Մոսկվա, ուր նա կկարողանա կայանալ իբրև անհատ և յուրացնել «գլխունական վաճառականության» արվեստը: Հիշատակված բոլոր երևույթները, սակայն, ներկայացված են օբյեկտիվ դիտարկումների ձևով: Առօրյա կյանքը «կենդանանում է» բազում իմաստներով ու հնարավորություններով, և թվում է՝ դաստիարակչական վեպի տրամաբանությանը հակառակ՝ գերծ է վախճանաբանությունից:

Մեկ այլ արդեն վեպի երկրորդ մասում ի հայտ եկող տեսարանում, Միքայելը պետք է Մոսկվայից վերադառնա հայրենիք՝ Մասիսյանի մահից հետո տեր կանգնելու ունեզրկման վտանգի առաջ կանգնած ընտանիքի գործերին, սակայն իմանալով գերմանուհի Բդայի հանկարծահաս հիվանդության մասին՝ շտապում է բժիշկ կանչել, ապա գնում է դեղատնից դեղեր գնելու. այլապես արագ անցումը սյուժեի մեկ շրջադարձային կետից մյուսը հանկարծ դանդաղում է երրորդ անձանց և օբյեկտիվ հանգամանքների բերումով, և Միքայելը սկսում է վարանել: Պատումը հանկարծ հնարավորություն է տալիս մեզ դիտարկելու այն տարբերակը, որ Միքայելը կարող է որոշել մնալ Բդայի հետ, և «հանկարծ նրա աչքը ընկավ կապված և բոլորովին պատրաստ չեմոդանի վրա: Այդ անշունչ և խուլ առարկան կարծես, սկսեց խոսել նրա հետ, կարծես ազդեց նրա վրա, ցույց տալով մի անհրաժեշտություն, որից փախչելը անհնարին էր: Դա միևնույն չեմոդանն էր, որ առաջին անգամ դրած ճանապարհային սայլակի վրա նա հեռացավ Մասիսյանների տնից. դա հիշեցրեց նրան այն փունջ ծաղիկը, որ երկու աղջիկները աղայի տան կտուրից ձգեցին նրա սայլակի մեջ... և իսկույն Գայանեի և Հռիփսիմեի նազելի դեմքերը պատկերացան նրա երևակայության մեջ... Նույն միջոցին փողոցից լսելի եղավ կառքի դորդոցը, և քանի բոպեից հետո Միքայելի սենյակի շեմքի վրա հայտնվեցավ կառապանը» (Բաֆֆի, 1984: 310): Եթե փոխառենք Մորետիի ձևակերպումը՝ «սա կյանքի իմաստը երևակայելու նոր, ճշմարտապես աշխարհիկ ձև է՝ սփռված անթիվ փոքր անցքերի միջև, անկայուն, խառնված աշխարհի անտարբերությանը կամ մանր էգոիզմներին, բայց միշտ համառորեն ներկա» (Moretti, 2013: 75): «Ոսկի աքաղաղի» մեջ, այսպիսով, Միքայելի բիլդունգին՝ ձևավորմանը և կայացմանը զուգընթաց, ընթերցողը ևս վարժվում է բուրժուական արդիականության զգայնություններին¹: Հակառակ նախարդիական, այդ թվում՝ ար-

¹ *Bildung* գերմաներեն բազմիմաստ բառը, որը երբեմն բնութագրվում է իբրև անթարգմանելի, իր հիմքում ունի *Bild*՝ «պատկեր, նկար, կերպար» հիմքը: Ըստ տեսաբան Մարկ Ռեդֆիլդի՝ ներկայացման (*Bild*) և ձևավորման (*Bildung*) փոխազդեցական այս կապն արտահայտում է «մանկավարժության և գեղագիտության, սուբյեկտի կրթության և տեքստի

նեյյան պատումային ավանդություններին հատուկ՝ կարդինալ ֆունկցիաների գերակայությանը, զգացմունքային և իրավիճակային էքսցեսներին ու ճակատագրապաշտական աշխարհընկալմանը՝ այստեղ պատումի ընթացքն իսկ հաստատում է ռացիոնալության, օբյեկտիվության, առօրեականի հանդեպ ուշադրության բուրժուական արժեքները: Կատալիզատորները վեպի՝ արևելահայ իրականության մեջ նոր ձևավորվող ընթերցող հանրությանն առաջարկում են «պատումային այնպիսի հաճույք, որը համատեղելի է բուրժուական կյանքի նոր կանոնավորության հետ: Դրանք պատումի արվեստի համար նույնն են, ինչ հարմարավետությունը՝ ֆիզիկական հաճույքի համար. չափավորված վայելք՝ հարմարեցված վեպ կարդալու ամենօրյա գործունեությանը» (Moretti, 2013: 81):

Ուշարժան է, որ դաստիարակչական վեպի առաջին սահմանման մեջ արդեն իսկ տեսանելի է ժանրի այս երկակի բնույթը: 1820 թ.-ի իր՝ «Über das Wesen des Bildungsromans» վերնագրով դասախոսության մեջ Դորպատի համալսարանի պրոֆեսոր Կառլ Մորգենշտերնը սահմանում է դաստիարակչական վեպը՝ առաջին անգամ կիրառելով բիլդունգսռոման (Bildungsroman) եզրը: Մորգենշտերնը պնդում էր, որ վեպը պետք է այդպես կոչվի, «քանի որ այն պատկերում է հերոսի բիլդունգը՝ սկզբից, զարգացման ընթացքում և մինչև ավարտվածության որոշակի աստիճան, և երկրորդ՝ քանի որ այն նպաստում է ընթերցողի բիլդունգին»: Բաֆֆու սոցիալական վեպերում ևս կերպարների ձևավորման հնարավորությունը կապվում է նաև գրքերի հետ և պատկերվում դրանց միջոցով: «Զահրումար»-ում Սոֆին վեպեր է կարդում, բայց նրա ընթերցանությունը չի հանգեցնում ինքնակարգավորման կամ դատողականության զարգացման, այլ ծնում է «երևակայական ցնորքներ»: Նրա վեպերը կտրված են աշխատանքից, հայերենից, ազգային գրականությունից և իրական փորձից: «Մինն այսպես, մյուսն այնպես»-ում Անիշկայի միջավայրում գիրքը դառնում է ինտերիերի մի մասը: Միքայելի ընթերցանությունը հակառակն է. այն սկսվում է որպես արգելված ու կիսազաղտնի կրթություն, գրեթե՝ դիմադրություն, ապա վերածվում գործնական և բարոյական կայացման միջոցի: Վեպի երկրորդ մասում Ստեփանը այս ուղղությունը դարձնում է գիտակցված ծրագիր: Նա Միքայելին տալիս է գրքեր առևտրի, ֆինանսների, բանկերի, հումքի, գործարանների և արդյունաբերական արհեստների մասին, բայց դրանց կողքին նաև մի վեպ, որովհետև գեղարվեստական գրականությունն էլ պիտի կրթի «հոգին և ճաշակը»: Այս դրվագում Բաֆֆու դիրքորոշումը առավել հստակ է:

ձևակերպման միջև խորը համանմանություն» (Redfield, 1996: 38–39): Արդի սուբյեկտն ու նրա կայացումը պատումայնացնող վիպական ժանրն, ուրեմն, ի հայտ են գալիս միասնաբար:

Գիտական առևտուրը բավարար չէ, եթե չի միանում ճաշակի, բարոյականության և երևակայության դաստիարակությանը:

Այսպիսով, «Ոսկի աքաղաղ»-ում ընթերցանությունը դառնում է միաժամանակ սյուժետային մեխանիզմ և վիպական ինքնամեկնաբանություն: Ստեփանի նվիրած ընթերցարանը թվում է վեպի մեծ մասը կազմող կատալիզատոր տեսարանների բազում մանրամասներից մեկը, բայց հետագայում այն բացում է Միքայելի շարժումը դեպի գրագիտություն, առևտրական գիտելիք և Մոսկվա: Իսկ Բաֆֆու ընթերցողը, սովորելով պատումի նոր ռիթմին, յուրացնում է բուրժուական արդիականության արժեքները, որոնք Միքայելը մարմնավորում է: Հերոսի բիլդունգը և ընթերցողի բիլդունգը այստեղ չեն տարանջատվում. վեպը ձևավորում է Միքայելին միաժամանակ ձևավորելով այն ընթերցողին, որը պիտի կարողանա ճանաչել Միքայելի ձևավորումը որպես արդի, բուրժուական և ազգային սուբյեկտի կայացում:

«Ոսկի աքաղաղ»-ով Բաֆֆին հասնում է դաստիարակչական վեպի այն ձևին, որն առավել մոտ է ժանրի բուրժուական-սոցիալական տրամաբանությանը. պատանի հերոսի բարոյական, մտավոր և գործնական աճը կապվում է հին խոջայական աշխարհի հաղթահարման, կրթության, ռացիոնալ մտածողության և նոր հասարակական սուբյեկտի ձևավորման հետ:

Ազգային կայացման սահմանները

Երբ 1879 թ.-ին «Ոսկի աքաղաղը» հատվածաբար տպվում է «Մշակ»-ում, Ռուս-թուրքական պատերազմի և Բեռլինի վեհաժողովի հետևանքով Հայկական հարցն արդեն նոր ուժով մտել էր միջազգային դիվանագիտական և քաղաքական դաշտ: Արևմտահայության ազատագրական պայքարին նվիրված իր ծրագրային վեպերում Բաֆֆին արդեն բիլդունգառոմանի փոխարեն դիմում է պատումային բոլորովին այլ ձևերի: Բիլդունգառոմանի լիարժեք դրսևորումը ստանալով «Ոսկի աքաղաղ» վեպով՝ գրողը, սակայն, մի անգամ ևս դիմում է դաստիարակչական վեպի պատումային տրամաբանությանը:

Բաֆֆու առաջին պատմավեպը՝ «Դավիթ Բեկ»-ը, նախ 1880-82 թթ. հատվածաբար տպագրվել է «Մշակ»-ում, ապա՝ առանձին հատորներով: Առաջին հայացքից այն դժվար է տեղավորվում բիլդունգառոմանի պատմության մեջ. այն պատմական վեպ է՝ ապստամբության, բերդերի գրավման, դավաճանության, ուխտի, վրեժի և պետականության կերտման կարճատև փորձի մասին: Սակայն վեպի գործողությունները կառուցված են Դավթի ձևավորման, կայացման պատումի շուրջ: Դավիթը պատմության

մեջ չի մտնում իբրև պատրաստի առաջնորդ: Վեպը նախ նրան անցկացնում է փորձառությունների հաջորդականությամբ՝ օտարություն, աղքատություն, հովվական ծառայություն, ռազմական կոփում, սիրային փորձություն, հասարակության կողմից ճանաչում, վերադարձ հայրենիք և հրամանատարական իշխանության ստանձնում: Այս շղթան ոչ թե կենսագրական նախաբան է, այլ պատումային առանցք. Սյունիքի ազատագրական շարժումը հնարավոր է դառնում միայն այն ժամանակ, երբ պատանի հովիվը ձևավորվում է որպես այն սուբյեկտը, որը կարող է կազմակերպել ազգային պայքարի գործը: Հերոսի՝ Վրաստանում անցկացրած շրջանն այդ կազմավորման առաջին իրական դպրոցն է: Դավիթը այնտեղ հայտնվում է իբրև անանուն, աղքատ, փորձության ենթարկվող մարմին: Թամարին փրկելուց հետո միայն տեքստը տեսանելի է դարձնում փոխակերպումը. «Դավիթը այլևս առաջվա հովիվ Դավիթը չէր»: Արչիլը նկատում է, որ նա «հենց մորից ծնված է թավաղ լինելու համար», իսկ պատմողը բացում է գաղտնիքը՝ «Դավիթը իսկապես ազնվական ծագումից էր» (Բաֆֆի, 1985: 196): Բիլդունգառմանի տրամաբանությունն այստեղ ակնհայտ է. հերոսն աստիճանաբար դառնում է ճանաչելի իր իսկական կոչման համար: Նա պետք է փորձառությամբ ձեռք բերի այն, ինչ ծագումով կարծես իրեն արդեն նախանշված է:

Սիրային գիծը նույնպես դաստիարակչական է, բայց ի տարբերություն «Ոսկի աքաղաղի», որի հերոսը, եթե դիմենք Գ. Ֆ. Վ. Հեգելի ձևակերպմանը՝ «վերջապես ստանում է իր աղջկան և ինչ-որ կարգի դիրք», և «ամուսնանում է նրա հետ», այս դեպքում այն չի տանում ամուսնության (Hegel, 1975: 593): Դավիթի՝ Թամարին ուղղված խոսքը բացում է նրա հասունացման քաղաքական հորիզոնը. իր նպատակն է «ազատել հայրենիքս, ազատել իմ ազգը և Հայաստանի թագուհու թագը քո գլխին դնել» (Բաֆֆի, 1985: 224): Սերը այստեղ ոչ թե բուրժուական հաշտեցման և ընտանեկան կայացման ճանապարհ է, այլ փորձություն, որից հերոսը պետք է հրաժարվի ազգային առաջադրանքի համար: Եթե «Ոսկի աքաղաղ»-ում բիլդունգը կապվում է արդիական սոցիալական տեղավորման, աշխատանքի, կապիտալի և բուրժուական բանականության հետ, այստեղ այն դառնում է հրամանատարական ինքնաձևավորում: Այսպիսի համակցությունը պատմավեպի համար արտառոց չէ: Գրականագետ Իան Դանքընը Վալտեր Սքոթի «Ուեվլըրի» վեպի մասին գրում է, որ պատմավեպը համադրում է հավաքական պատմական փոփոխությունն ու անհատի հոգեբանական-բարոյական հասունացումը. «ազգային պատմությունն ու բիլդունգառմանը միջնորդավորում են միմյանց», և այդ պատճառով «Ուեվլըրին» կարող է ընկալվել որպես «ազգային և պատմական բիլդունգառման» (Duncan, 2006: 175): Զենեթ

Սրոկան նույն վեպի կրթական տրամաբանությունը նկարագրում է որպես հավասարակշռություն «պիտանի» և «անպիտան» գիտելիքների միջև, որտեղ հերոսի գրքային երևակայությունը չի մերժվում (Sroka, 1980: 140), այլ «մշակվում է՝ վերածվելով պրակտիկ իմաստության» և աստիճանաբար ներառվում կյանքի փորձի մեջ (Sroka, 1980: 148): Բայց եթե Ուելլըրլին դաստիարակվում է պատմական փոթորկից դուրս գալու, ռոմանտիկ պատրանքը սանձելու և մասնավոր կյանքի հավասարակշռությանը հասնելու համար, ապա Դավիթը ձևավորվում է պատմության մեջ մտնելու, դրա ընթացքը ղեկավարելու և ազգային ուժերը շարժման մեջ դնելու համար: Այս առումով՝ դաստիարակչական վեպին երբեմն տրվող «հիասթափության վեպ» (“novel of disillusionment”) բնութագրումը Դավթի կերպարի դեպքում չի գործում:

Հայրենիք վերադառնալուց հետո անհատի կայացումը վերաճում է հավաքական կայացման խնդրի: Սյունիքը դեռևս պատրաստ չէ ազատագրության. այնտեղ կան «անհաշտ, միմյանցից բաժանված, անշարժ ուժեր» (Բաֆֆի, 1985: 248): Նշանակալի է, որ Դավթին կանչող նամակը կեղծված է: Ստեփանոսը կարիք ունի ստեղծել ազգային կամքի պատրանքը, որը դեռ իրականություն չէ: Դավթի քաղաքական հասունությունը երևում է նրանում, որ նա չի վիստվում այդ բացահայտումից, այլ պահանջում է գործողության ապացույց. «Սկսելու համար քառասուն հոգին փոքր չէ»: Մեղիքներին և տանուտերերին «լոկ խոսքերով չես կարող համոզել», որովհետև նրանք կմնան «խոհեմ անտարբերություն»-ի, ավելի ճիշտ՝ «խոհեմ մեռելություն»-ի մեջ. նրանց պետք է «շոշափելի փաստ» (Բաֆֆի, 1985: 249): Այս պահից Դավթի բիլլունգը դառնում է ժողովրդինը:

Բայց միևնույն ժամանակ կարևոր է նկատել «Դավիթ Բեկի» ընդգծված տարբերությունները դասական բիլլունգառմանից: Դավթի ձևավորման պատումը ավելի փակ է, նպատակաբանական և էպիկական, քան «Ոսկի աքաղաղ»-ի Միքայելինը: Սյուրիին ուղղված խոսքում պատանի Դավիթը հիշում է իր հին ուխտը. «Ես լսեցի կոչող ձայնը և ուխտեցի մինչև մահ կովել անարդարության դեմ» (Բաֆֆի, 1985: 114): Այս ուխտը Դավթի կերպարի ձևավորումը դարձնում է ոչ այնքան բաց ինքնորոնում, որքան ճակատագրով որոշվածի աստիճանական իրականացում: Նա ոչ թե սովորական աշխարհի մեջ է որոնում կյանքի իմաստը, այլ մանուկ հասակում արդեն կարծես ճակատագրով ստացել է իր ուղղությունը: Այստեղ բուրժուական բիլլունգի փոխարեն գործում է ազնվականական-էպիկական տրամաբանություն. հերոսը չի հայտնաբերում իր տեղը սովորական մարդկանց սովորական աշխարհի մեջ, այլ կայանալով՝ դառնում արժանի արդեն նախանշված ազգային առաքելությանը: Չարմանալի չէ, ուրեմն, որ ի տարբե-

րություն «Ոսկի աքաղաղի»՝ «Դավիթ Բեկի» պատումի մեջ գերակշռում են արմատական գործառույթները: Կատալիզատորների փոխարեն Բաֆֆին այստեղ ավելի հաճախ կիրառում է նկարագրական և պատմական դադարներ, որոնք ոչ թե առօրյա կյանքին լրջություն և իմաստ են հաղորդում, այլ պատմականացնում և տեղորոշում են ընթերցողին անձանոթ աշխարհը: Պատմավեպի աշխարհը արկածի, անակնկալների և փորձության աշխարհ է, և հերոսի կառուցման՝ դաստիարակչական վեպի սկզբունքը լուռ հակասության մեջ է դրա հետ: Բաֆֆու արդեն հաջորդ «Սամվել» պատմավեպում բիլլունգստոմանի պատումային կառույցն այլևս իսպառ դուրս է մղված:

Վեպի վերջաբանը ձևավորման ամբողջ ընթացքի և՛ գագաթն է, և՛ ժխտումը: Դավիթը դառնում է «իր ազատ հայրենիքի տերը և իշխանը», կարգավորում է երկրի բաժանումները, մելիքների, տանուտերերի և գորապետների պարտականությունները, «զինվորական ծառայությունը ընդհանրապես պարտավորիչ չինեց» (Բաֆֆի, 1985: 519): Բայց անհատական կազմավորումը չի վերածվում կայուն հավաքական կազմավորման. Դավիթը մահանում է առանց ժառանգի, իսկ Մխիթարի մահից հետո «հայոց միաբանության կապը իսպառ քակտեցավ» (Բաֆֆի, 1985: 520): Անհատի կյանքի ավարտով փլուզվում է նաև քաղաքական կազմավորումը:

Այսպիսով, «Դավիթ Բեկ» վեպում բիլլունգստոմանի ձևը տեղափոխվում է պատմական-ազգային դաշտ, բարձրացվում մինչև զինված հայրենասիրություն և պետականության շեմ, բայց հենց այնտեղ էլ բացահայտում է իր ողբերգական անկայունությունը. հերոսը ձևավորվում է, ժողովուրդը մի պահ կազմավորվում է նրա շուրջ, սակայն ազգային կամքը չի վերաճում կայուն քաղաքական մարմնի: Այստեղ Բաֆֆու վիպագրության մեջ կայացման պատումը հասնում է իր ամենաբարձր ազգային-պատմական բովանդակությանը և միաժամանակ բացահայտում իր սահմանները:

Եզրակացություն

Այսպիսով, Բաֆֆու վիպագրության մեջ դաստիարակչական վեպը՝ բիլլունգստոմանը, ի հայտ է գալիս իբրև ճկուն պատումային տրամաբանություն, որի միջոցով հայ վեպը փորձում է մտածել արդիական սուբյեկտի և ազգային կյանքի ձևավորման խնդիրը: «Սալբի»-ում այն դեռ գործում է սիրավեպի, լուսավորական դաստիարակության և ապաարնելականացման սխեմաների ներսում: «Զահրումար» և «Մինն այսպես, մյուսն այնպես» վեպերում Բաֆֆին ցույց է տալիս այդ տրամաբանության անհնարինությունը հին վաճառականական աշխարհի մեջ, որտեղ արտաքին նշանների փոփոխությունները չեն բերում արևմտականացման, իսկ հարստությունը՝

ազգային-պատմական ուժի: «Ոսկի աքաղաղ» վեպում է միայն, որ Կալո-Միքայելի պատմությունը գրողին տալիս է պատումային այն ձևը, որում աշխատանքը, ընթերցանությունը, առևտրական գիտելիքը, ինքնակարգավորումը և սոցիալական շարժունակությունը միավորվում են՝ ներկայացնելու արդի բուրժուական սուբյեկտի կայացումը: Այդուհանդերձ, Բաֆֆու համար բիլդունգի խնդիրը չի փակվում բուրժուական հասարակության սահմաններում: «Դավիթ Բեկ»-ում այն տեղափոխվում է պատմավեպի դաշտ և ստանում ազնվական-հերոսական ու ազգային-ազատագրական բովանդակություն: Այստեղ հերոսի ձևավորումը մի պահ կազմակերպում է նաև ժողովրդի քաղաքական կազմավորումը, սակայն չի կարողանում կայուն պետական ձևի վերածվել: Հետևաբար, Բաֆֆու վիպագրության մեջ բիլդունգառմանի զարգացման ուղեծիրը բացահայտում է և՛ արդի հայ սուբյեկտի կայացման հնարավորությունը, և՛ այդ հնարավորության պատմական սահմանները:

Գրականության ցանկ

1. **Ալթանդիլեանց Ա.**, Բաֆֆի. Պատկերներ Բաֆֆիի կեանքից, Ալեքսանդրապոլ, տպ. Մ. Մալխասեանի, 1904:
2. **Գրիգորյան Ա.**, Պետության պարտաբանական ըմբռնման սահմանները 19-րդ դարի արևելահայ լուսավորիչների քաղաքական ծրագրերում, Երևան, 2023, 35 էջ, https://modernities.am/wp-content/uploads/2024/01/Աշոտ-Գրիգորյան_2023.pdf (մուտք՝ 29.03.2026):
3. **Սարինյան Ս.**, Բաֆֆի, Հայ վեպի պատմություն (19-րդ դար), Երևան, Գիտություն հրատ., 2005, 594 էջ:
4. **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, «Սովետական գրող», 1984, 544 էջ:
5. **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, «Սովետական գրող», 1985, 608 էջ:
6. **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, Հայպետհրատ, 1964, 532 էջ:
7. **Amrine F.**, Goethe and the Myth of the Bildungsroman: Rethinking the Wilhelm Meister Novels, Cambridge, Cambridge University Press, 2020, 210 p.
8. **Aravamudan S.**, Enlightenment Orientalism: Resisting the Rise of the Novel, Chicago, University of Chicago Press, 2012, 342 p.
9. **Bakhtin M. M.**, Speech Genres and Other Late Essays, Austin, University of Texas Press, 1994, 189 p.
10. **Bakhtin M. M.**, The Bildungsroman and Its Significance in the History of Realism: Toward a Historical Typology of the Novel, Speech Genres and Other Late Essays, trans. Vern W. McGee, eds. Caryl Emerson and Michael Holquist, Austin, University of Texas Press, 1986, pp. 10–59.
11. **Barthes R.**, Introduction to the Structural Analysis of Narratives, Barthes: Selected Writings, ed. Susan Sontag, Glasgow, Fontana/Collins, 1983, pp. 251–295.
12. **Buckley J. H.**, Seasons of Youth: The Bildungsroman from Dickens to Golding, Cambridge, MA, Harvard University Press, 1974.

13. **Duncan I.**, *Waverley* (Walter Scott, 1814), *The Novel*, Volume 2: Forms and Themes, ed. Franco Moretti, Princeton, Princeton University Press, 2006, pp. 173–180.
14. **Esty J.**, *Unseasonable Youth: Modernism, Colonialism, and the Fiction of Development*, New York, Oxford University Press, 2012, 282 p.
15. **Garrido Ardila J. A.**, *The Picaresque Novel in Western Literature: From the Sixteenth Century to the Neopicaresque*, Cambridge, Cambridge University Press, 2015, 285 p.
16. **Hegel G. W. F.**, *Aesthetics: Lectures on Fine Art*, translated by T. M. Knox, 2 vols., Oxford, Clarendon Press, 1975, 1289 p.
17. **Hegel G. W. F.**, *The Philosophy of History*, trans. J. Sibree, Kitchener, Batoche Books, 2001, 478 p.
18. **Kant I.**, *An Answer to the Question: “What Is Enlightenment?”*, *Kant’s Political Writings*, ed. Hans Reiss, Cambridge, Cambridge University Press, 1991, pp. 54–60.
19. **Kontje T.**, *The German Tradition of the Bildungsroman*, *A History of the Bildungsroman*, ed. Sarah Graham, Cambridge, Cambridge University Press, 2019, pp. 10–32.
20. **Moretti F.**, *Atlas of the European Novel, 1800–1900*, London, Verso, 1999, 206 p.
21. **Moretti F.**, *The Bourgeois: Between History and Literature*, London, Verso, 2013, 203 p.
22. **Moretti F.**, *The Way of the World: The Bildungsroman in European Culture*, London, Verso, 1987, 256 p.
23. **Redfield M.**, *Phantom Formations: Aesthetic Ideology and the Bildungsroman*, Ithaca, Cornell University Press, 1996, 240 p.
24. **Rüggemeier A.**, *Bildungsroman*, *Oxford Research Encyclopedia of Literature*, Oxford University Press, 2023, <https://doi.org/10.1093/acrefore/9780190201098.013.1274> (ününp` 13.04.2026):
25. **Sroka K. A.**, *Education in Walter Scott’s Waverley*, *Studies in Scottish Literature*, 1980, vol. 15, issue 1, pp. 139–164.
26. **Steiner L.**, *The Bildungsroman in Imperial Russia and the Soviet Union*, *A History of the Bildungsroman*, ed. Sarah Graham, Cambridge, Cambridge University Press, 2019, pp. 84–116.
27. **Swales M.**, *The German Bildungsroman from Wieland to Hesse*, Princeton, Princeton University Press, 1978, 171 p.

References

1. **Amrine F.**, *Goethe and the Myth of the Bildungsroman: Rethinking the Wilhelm Meister Novels*, Cambridge, Cambridge University Press, 2020, 210 p.
2. **Aravamudan S.**, *Enlightenment Orientalism: Resisting the Rise of the Novel*, Chicago, University of Chicago Press, 2012, 342 p.
3. **Awt’andileants’ A.**, *Raffi. Patkerner Raffii keank’its’* [Raffi: Images from Raffi’s Life], *Alek’sandrapol*, tp. M. Malkhaseani, 1904. (In Armenian)
4. **Bakhtin M. M.**, *Speech Genres and Other Late Essays*, Austin, University of Texas Press, 1994, 189 p.
5. **Bakhtin M. M.**, *The Bildungsroman and Its Significance in the History of Realism: Toward a Historical Typology of the Novel*, *Speech Genres and Other Late Essays*, trans. Vern W. McGee, eds. Caryl Emerson and Michael Holquist, Austin, University of Texas Press, 1986, pp. 10–59.
6. **Barthes R.**, *Introduction to the Structural Analysis of Narratives*, *Barthes: Selected Writings*, ed. Susan Sontag, Glasgow, Fontana/Collins, 1983, pp. 251–295.

7. **Buckley J. H.**, *Seasons of Youth: The Bildungsroman from Dickens to Golding*, Cambridge, MA, Harvard University Press, 1974.
8. **Duncan I.**, *Waverley* (Walter Scott, 1814), *The Novel*, Volume 2: Forms and Themes, ed. Franco Moretti, Princeton, Princeton University Press, 2006, pp. 173–180.
9. **Esty J.**, *Unseasonable Youth: Modernism, Colonialism, and the Fiction of Development*, New York, Oxford University Press, 2012, 282 p.
10. **Garrido Ardila J. A.**, *The Picaresque Novel in Western Literature: From the Sixteenth Century to the Neopicaresque*, Cambridge, Cambridge University Press, 2015, 285 p.
11. **Grigoryan A.**, Petut'yan partabanakan ėmbrnman sahmannerĕ 19-rd dari arewelahay lusavorich'neri k'aghak'akan tsragrerum [The Limits of the Deontological Understanding of the State in the Political Programs of Nineteenth-Century Eastern Armenian Enlighteners], Erevan, 2023, 35 p., https://modernities.am/wp-content/uploads/2024/01/U2nun-Qrhqnnyun_2023.pdf (accessed: 29.03.2026). (In Armenian)
12. **Hegel G. W. F.**, *Aesthetics: Lectures on Fine Art*, translated by T. M. Knox, 2 vols., Oxford, Clarendon Press, 1975, 1289 p.
13. **Hegel G. W. F.**, *The Philosophy of History*, trans. J. Sibree, Kitchener, Batoche Books, 2001, 478 p.
14. **Kant I.**, *An Answer to the Question: "What Is Enlightenment?"*, *Kant's Political Writings*, ed. Hans Reiss, Cambridge, Cambridge University Press, 1991, pp. 54–60.
15. **Kontje T.**, *The German Tradition of the Bildungsroman*, *A History of the Bildungsroman*, ed. Sarah Graham, Cambridge, Cambridge University Press, 2019, pp. 10–32.
16. **Moretti F.**, *Atlas of the European Novel, 1800–1900*, London, Verso, 1999, 206 p.
17. **Moretti F.**, *The Bourgeois: Between History and Literature*, London, Verso, 2013, 203 p.
18. **Moretti F.**, *The Way of the World: The Bildungsroman in European Culture*, London, Verso, 1987, 256 p.
19. **Raffi**, *Erkeri zhoghovatsu*, h. 3 [Collected Works, vol. 3], Erevan, Sovetakan grogh, 1984, 544 p. (In Armenian)
20. **Raffi**, *Erkeri zhoghovatsu*, h. 7 [Collected Works, vol. 7], Erevan, Sovetakan grogh, 1985, 608 p. (In Armenian)
21. **Raffi**, *Erkeri zhoghovatsu*, h. 9 [Collected Works, vol. 9], Erevan, Haypethrat, 1964, 532 p. (In Armenian)
22. **Redfield M.**, *Phantom Formations: Aesthetic Ideology and the Bildungsroman*, Ithaca, Cornell University Press, 1996, 240 p.
23. **Rüggemeier A.**, *Bildungsroman*, *Oxford Research Encyclopedia of Literature*, Oxford University Press, 2023, <https://doi.org/10.1093/acrefore/9780190201098.013.1274> (accessed: 13.04.2026).
24. **Sarinyan S.**, Raffi, Hay vepi patmut'yun (19-rd dar) [History of the Armenian Novel: The Nineteenth Century], Erevan, Gitut'yun hrat., 2005, pp. 215–252. (In Armenian)
25. **Sroka K. A.**, *Education in Walter Scott's Waverley*, *Studies in Scottish Literature*, 1980, vol. 15, issue 1, pp. 139–164.
26. **Steiner L.**, *The Bildungsroman in Imperial Russia and the Soviet Union*, *A History of the Bildungsroman*, ed. Sarah Graham, Cambridge, Cambridge University Press, 2019, pp. 84–116.
27. **Swales M.**, *The German Bildungsroman from Wieland to Hesse*, Princeton, Princeton University Press, 1978, 171 p.

Արթուր Միրզոյան – ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հետազոտող: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ վեպի պատմություն, 19-րդ դարի հայ գրականություն, նորագույն և ժամանակակից գրականություն, համաշխարհային գրականություն, գրականության տեսություն:

ORCID ID: 0009-0006-1092-7899
mirzoianarthur@gmail.com

Arthur Mirzoyan – Researcher at the Institute of Literature after M. Abeghyan of NAS of RA. Scholarly interests: History of the Novel, 19th century Armenian Literature, Modern and Contemporary Literature, World Literature, Literary Theory.

ORCID ID: 0009-0006-1092-7899
mirzoianarthur@gmail.com

Артур Мирзоян – Исследователь в Институте литературы имени М. Абега, НАН РА. Научные интересы: история романа, армянская литература 19-ого века, новейшая и современная литература, мировая литература, теория литературы.

ORCID ID: 0009-0006-1092-7899
mirzoianarthur@gmail.com